ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1440

11.08.2014թվ.

ՀՀ Ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ
պարոն՝ Վ. Գասպարյանին

«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ»
ՄՏՄ № 3246
13. 08. 2014

Հարգելի պարոն Գասպարյան,

ՀՀ ոստիկանության Դիտորդական խումբը սույն թվականի օգոստոսի 6-ին և 8-ին այցելություններ էր կատարել ՀՀ ոստիկանության Կոտայքի ՄՎ Կոտայքի ՁՊՎ:

1. Առաջին այցելության ընթացքում Դիտորդական խումբը արձանագրել էր՝ Լոզարանում ջրատաքացուցիչը չէր գործում և 2-րդ խցում առկա էր կեղտոտ սրբիչ: Խցերից դուրս բերման գրանցամատյանը լրացված էր տարօրինակ օրինաչափությամբ, N400 –ին հաջորդում էր N300-ը, N500-ին N200-ը, N200-ին՝ կրկին N400-ը:

2. Երկրորդ այցելության ընթացքում՝ ջրատաքացուցիչը վերանորոգել էին, կեղտոտ սրբիչը փոխարինել էին, <<Ձերբակալված անձաց խցերից դուրս բերելու>> գրանցամատյանում ուղղվել էին հերթական համարները՝ արդեն ջնջումներով: Բայց նշված վերականգնումից հետո, Դիորդական խումբը կրկին արձանագրել է, որ N632 գրառումը կատարվել է կրկնակի անգամ՝ տարբեր անձաց անուններով: /*փաստը հաստատող լուսանկար՝ 20, 21, 23, 24, 25, 26, 27, 28, 29, 30, 31, 32, 33, 34, 35, 36, 37*/:

«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ՄՏՄ № 6381
«13» 08 2014թ.

3. Արթուր Երանոսի Խաչատրյանը բերման է ենթարկվել և ձերբակալվել է 16.05.2014թ-ին ժամը 12.45-ին և նույն օրը՝ ժամը 13.40-ին ընդունվել է ՁՊՎ: Հաջորդիվ՝ ըստ <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանի՝ 19.05.2014թ-ին ժամը 12.05-ին Ա. Խաչատրյանը տեղափոխվել է դատարան խափանման միջոց կիրառելու համար: Ըստ <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանի նշված անձը այլևս ետ չի ընդունվել ՁՊՎ, իսկ << ՁՊՎ-ում պահվող անձաց հաշվառման>> գրանցամատյանում առկա է նրան ազատ արձակելու մասին գրառում՝ 19.05.2014թ, որտեղ

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա
www.policemonitoring.org
Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
E-mail: info@policemonitoring.org

ժամը նշված չէ: Խնդրում ենք սա որպես ՀՊՎ-ի վարչակազմի թերացում չհաշվել, որովհետև, եթե անձը քննիչի որոշման համաձայն ազատ է արձակվել, ապա ըստ ՀՀ օրենսդրության քննիչը պարտավոր էր նախկին ձերբակալվածին համապատասխան որոշման հետ ներկայացնել ՀՊՎ, որից հետո ՀՊՎ-ի վարչակազմը պարտավոր էր ազատ արձակել: / *փաստը հաստատող լուսանկար-7*/

4. Էդուարդ Սամվելի Սիմոնյանը ըստ <<ՀՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանի՝ ՀՊՎ է ընդունվել 25.06.2014թ-ին ժամը 21.30-ին, որը ջնջվել և դարձվել է 24.06.2014թ ժամը 21.30 : Ձերբակալվել է 24.06.2014թ-ին ժամը 19.15-ին, բայց ըստ անձին ձերբակալելու մասին արձանագրության՝ նա ձերբակալվել է 25.06.2014թ-ին ժամը 21.25-ին, բերման է ենթարկվել նույն օրը, նույն ժամին:

   Ավելացնենք, նաև, որ միանշանակ տվյալ անձը 24.06.2014թ-ին չէր կարող ընդունվել ՀՊՎ, քանի որ <<ՀՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանի N68-րդ համարի տակ նշված անձը ՀՊՎ էր ընդունվել արդեն իսկ 24.06.2014թ-ին ժամը 22.15-ին և հաջորդիվ N69 համարը, չէր կարող լինել ժամը 21.30: Միաժամանակ խնդրում ենք ուշադրություն դարձնել <<ՀՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանի ձերբակալման ամսաթվին և ժամին և անձին ձերբակալելու մասին օրվան և ժամին:

   Տվյալ դեպքում էլ Դիտորդական խումբը կարծում է, որ ներկայացվածը կրկին վրիպակներ չեն և խնդրում ենք մանրամասն ուսումնասիրել և մեկնաբանել ներկայացված փաստը: / *փաստը հաստատող լուսանկար – 14,16,17*/

5. 06.08.2014թ-ի այցելության ընթացքում Դիտորդական խումբը հանդիպել էր ՀՊՎ-ում պահվող ձերբակալված Ալբերտ Մարտունու Գևորգյանի հետ և նրանից տեղեկացել էինք, որ ինքը տառապում է <<լյարդի ցեռոզ>> հիվանդությամբ, և հանդիսանում է երկրորդ կարգի հաշմանդամ: Տվյալ գործով զբաղվող քննիչը հաստատեց նրա երկրորդ կարգի հաշմանդամության փաստը: Ըստ <<Ձերբակալվածներին բուժզննության և բուժօգնության>> գրանցամատյանի՝ Ա. Գևորգյանը 06.08.2014թ-ին ժամը 19.50-ին Դիտորդական խմբի միջնորդությամբ հրավիրվել է շտապ օգնություն: Շտապ օգնության բժիշկների կողմից ցուցաբերվել է առաջին բուժօգնություն, ներարկվել է ցավազրկող դեղահաբեր և կատարվել է գրառում՝ թերապևտի և վիրաբույժի հետազոտման վերաբերյալ: Ըստ ձերբակալվածի ինքը սնվում է դիետիկ սնունդով և օգտագործում է ստաբիլ դեղորայք: Դիտորդական խմբի 08.08.2014թ-ի այցելության ընթացքում արձանագրվեց, որ հաշվի չի առնվել հրավիրված շտապ օգնության բժշկի կողմից կատարված գրառումները: Անտեսվել է <<Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին>> ՀՀ օրենքի 21-րդ կետի պահանջը

<<Մասնագիտացված բուժօգնության կարիք ունեցող ձերբակալված կամ կալանավորված անձը փոխադրվում է հատուկ մասնագիտացված կամ քաղաքացիական բուժհաստատություն: Ձերբակալված և կալանավորված անձանց բժշկական, այդ թվում՝ հոգեբուժական օգնություն ցույց տալու, նրանց բուժհաստատություններում պահելու, ինչպես նաև բուժսպասարկման գործում այդ հաստատությունների աշխատողներին ներգրավելու կարգը սահմանում է լիազորված մարմինը>> և ՀՀ կառավարության կողմից 05.07.2008թ-ին թիվ 574-Ն հրամանի 179 կետի պահանջները: Այն է՝ *<<ՀՊԿ-ում չի թույլատրվում պահել հոգեկան, սուր վարակիչ և **մասնագիտական բուժօգնության կարիք ունեցող ձերբակալվածների** Նշված անձիք բուժաշխատողի կամ շտապ բուժօգնության բժշկի գրավոր եզրակացությամբ և դրա հիման վրա ոստիկանության պետի որոշմամբ փոխադրվում են հատուկ մասնագիտացված կամ քաղաքացիական բուժհաստատություն>>*:

Արդյունքում՝ Ա. Գևորգյանը ՀՊԿ-ում գտնվելու ընթացքում արժանացել է անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի, չի ցուցաբերվել համապատասխան բուժօգնություն: / *փաստը հաստատող լուսանկար -5/*

Այսպիսով խնդրում ենք ուսումնասիրել ներկայացված փաստերը և տալ մեկնաբանություն:

Հարգանքներով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝ Հ. Սահակյան

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

375025, ք. Երևան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

N 2/2-1-2203 << 10 >> 09 2014թ.

Ձեր 11.08.2014թ. թիվ 2621/1440 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ Հասմիկ Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Հայտնվում է, որ դիտորդների խմբի կողմից 2014թ. օգոստոսի 6-ին և 8-ին ՀՀ ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Կոտայքի բաժնի ձերբակալվածներին պահելու վայր կատարած այցելությունների ընթացքում արձանագրված թերությունները և խախտումներն ուսումնասիրվել են ՀՀ ոստիկանության շտաբում և Կոտայքի մարզային վարչությունում, որի կապակցությամբ տրվում են հետևյալ մեկնաբանությունները.

1. 2. Դիտորդների խմբի կողմից արձանագրված թերությունները վերացվել են: Ինչ վերաբերվում է <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերման>> գրանցամատյանում հերթական համարները ջնջումներով գրանցելուն, ապա հայտնվում է, որ չնայած այդ հանգամանքով ՁՊՎ-ում պահվող անձանց իրավունքները չեն խախտվել, այնուամենայնիվ ոստիկանության Կոտայքի մարզային վարչության կողմից կատարվել է ծառայողական քննություն, որի արդյունքում իրենց ծառայողական պարտականությունների մեջ թերացած ոստիկանության ծառայողները ենթարկվել են կարգապահական պատասխանատվության, իսկ ՁՊՎ վարչակազմերին տրվել են կոնկրետ հանձնարարականներ՝ նմանատիպ թերությունները հետագայում բացառելու նպատակով:

3. Հետախուզվող Ա.Խաչատրյանը ոստիկանության Կոտայքի բաժին բերման է ենթարկվել 16.05.2014թ. ժամը 12.45-ին, նույն օրը ժամը 13.40-ին ընդունվել է ՁՊՎ: 19.05.2014թ. ժամը 12.05-ին Ա.Խաչատրյանը տեղափոխվել է դատարան՝ կալանավորումն որպես խափանման միջոց կիրառելու հարցը քննության առնելու համար: Դատարանի կողմից միջնորդությունը չի բավարարվել և վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ Ա.Խաչատրյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել ստորագրություն չհեռանալու մասին: Որոշման մեկ օրինակը հանձնվել է ոստիկանության Կոտայքի բաժնի ՁՊՎ, ինչի հիման

վրա Ա.Խաչատրյանը ազատ է արձակվել: Ինչ վերաբերվում է ազատ արձակման ժամը <<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանում չնշելուն, ապա այն ՁՊՎ վարչակազմի կողմից թույլ տված խախտում է, որի համար ինչպես վերը նշվեց իրենց ծառայողական պարտականությունների մեջ թերացած ոստիկանության ծառայողները ենթարկվել են կարգապահական պատասխանատվության:

Հարկ է նշել, որ դատարանի կողմից կալանավորումն որպես խափանման միջոց ընտրելու միջնորդությունը չբավարարելու դեպքում, վարույթն իրականացնող մարմինն իրավասու չէ անձին հարկադիր կարգով ներկայացնել ՁՊՎ:

4. Է.Սիմոնյանը ձերբակալվել և ՁՊՎ է ընդունվել 25.06.2014թ. ժամը 21.30-ին, սակայն ՁՊՎ ոստիկանի կողմից <<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանում սխալմամբ գրառվել է 24.06.2014թ., որի համար Կոտայքի մարզային վարչության կողմից կատարված ծառայողական քննության արդյունքներով ենթարկվել է կարգապահական պատասխանատվության:

5. 06.08.2014թ. ժամը 16.30-ին ՁՊՎ ընդունված Ա.Գևորգյանի մարմնական վնասվածքները արձանագրելու համար <<Աբովյան>> ԲԿ-ից հրավիրվել են բուժաշխատակիցներ, որոնք արձանագրել են Ա.Գևորգյանի մոտ հայտնաբերված մարմնական վնասվածքները և ցուցաբերել անհրաժեշտ բուժօգնություն, սակայն ձերբակալված Ա.Գևորգյանի կողմից իր հիվանդության մասին ոչինչ չի հայտնվել: Նույն օրը ժամը 19.50-ին դիտորդների այցելության պահին դարձյալ հրավիրվել են բուժաշխատակիցներ, Ա.Գևորգյանին ցուցաբերվել է անհրաժեշտ բուժօգնություն և <<Ձերբակալված անձանց բուժզննության կամ բուժօգնության>> գրանցամատյանում բժշկի կողմից գրառում է կատարվել՝ <<խորհուրդ է տրվում թերապևտի և վիրաբույժի դիտման>> բովանդակությամբ:

07.08.2014թ. ժամը 11.55-ին և 08.08.2014թ. ժամը 15.50-ին Ա.Գևորգյանին բուժօգնություն ցուցաբերելու նպատակով դարձյալ հրավիրվել են բուժաշխատակիցներ, որոնց կողմից Ա.Գևորգյանին կրկին ցուցաբերվել է անհրաժեշտ բուժօգնություն:

Քանի որ, հրավիրված բժիշկների կողմից, համաձայն ՀՀ կառավարության 05.06.2008թ. թիվ 574-Ն որոշմամբ հաստատված ներքին կանոնակարգի 179-րդ կետի, չի տրվել գրավոր եզրակացություն, ինչպես նաև չի նշվել, որ Ա.Գևորգյանը ստացիոնար բուժման կարիք ունի, այդ իսկ պատճառով Ա.Գևորգյանը չի տեղափոխվել համապատասխան բժշկական հաստատություն:

ՀՀ ոստիկանության շտաբ